Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 23 ՅՈՒԼԻՍ 1905 — ԹԻՒ 733

Varian Wechselarisenegabe Vienne

ՇԱՐԺՈՒՄ

ՀԱՅԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին աւելի անքամներու համար 20 0/0 զեղչ կը լլլայ:

—o—

Վարձայի համար ձեւը իր 10 սաթիմ է

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեւոք 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեւոք 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեկ տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂՔ ԲԱԺՆԵՑԻՆԸ ՊԼԻՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԹԷ ԻՆՉԻ ԴՐԱՄՆԵՐԸ ՉԸ ՅԱՆՁՆԵՑԻ

—()o()—

Ա.

Անցեալները գրամները ինձ մօտ գտնվելու մասին յայտարարելով՝ ես խոստացայ ժամանակին իմ այդ քայլի պատճառները նոյնպէս պարզել. ու այսօր գալիս եմ և այդ խոստումս կատարելու.

Այս տարի յունվարին մենք ունէինք Բալկանեան շրջանական ժողով. ժողովի կազմութեան մասին առայժմ չեմ խօսում. միայն այսքանը կասեմ որ իր ձեւով նա նման էր դաշնակցութեան բոլոր ժողովներին.

Շրջանական ժողովի մէջ հարց բարձրացրին անպատճառ չըլլուն գործիչ պահելու և Կ. կոմիտէի օրգան ստեղծելու մասին, որի ներքո պաշտպանները կրկին Ֆիլիպէից եկած պատգամաւորներն էին, որոնցից Պ... նախկին կեդրոնական կոմիտէի անդամ, հակառակ Կ. կոմիտէի հանգիսաւոր որոշումի և ցրված պաշտօնական յայտարարութեան որ միայն տեղացիները պէտք է պատգամաւոր ընտրվեն, իր ձգտումներին յագուրդ տալու համար պատգամաւոր էր դարձել մի կոմիտէի.

Ժողովը Ֆիլիպէցիների թելադրութեամբ որոշ նպատակներ ու նէր գործիչ բերել տալու և օրգան հիմնելու մէջ և այդ նպատակին հասնելու համար նա քաջութիւնը ունեցաւ Դաշնակցութեան ամենահիմնական մի օրէնքը ոտքի տակ տալ. Այդ օրէնքը հետեւեալն է.—«Դաշնակցական ամեն մարմին իր տեղական գործերի համար իր եկամուտի միայն 1/10 ծախսելու իրաւունքը ունի.»

Այդ օրէնքը ընդունվեց վերջին ընդհանուր ժողովում մարմինների շռայլ և անտեղի ծախսերի առջեւը առնելու և հաւաքված դրամը իր բուն նպատակին յատկացնելու մտքով. Սակայն Ռոստոմի ծառայ Ֆիլիպէցիների և նրանց ձեռքում դարձած գործիքների համար օրէնքը, որչափ էլ որ նա էական լինի ինչ նշանակութիւն ունի. Գործիչ պահելու համար նշանակվեց մօտ չորս հազար Ֆրանք, պաշտօնների ծախքերը միասին. ես պարտականութիւն համարեցի բողոքել այդ օրինազանցութեան դէմ և պարզել որ մենք իրաւունք չունենք այդպիսի մի խոշոր գումար նշանակել, առանց գիտենալու թէ մեր եկամուտը միւս տարի որչափ կարող է լինել և յետոյ Բուլգարիոյ ժողովուրդը այլեւս առանձին գործիչների պէտք չունի. Կ. կոմիտէի անդամները պարտաւոր են գործերը կատարել, ու մենք երբէք չենք կարող տարեկան 40—50000 ֆրանք եկամուտ ունենալ այս աղքատ երկրում որպէսզի մեզ թոյլ տանք այդտեսակ խոշոր գումարներ ծախսելու այն էլ Բուլգարիայում ապրող գործիչի համար. Բայց լրսողն ով էր, մարդիկ ուզում էին իրենց նպատակներին հասնել այն էլ ժողովին մասնակցող միամիտներին իրենց ժողովրդի դէմ կատարած ոճիրին մասնակցել տալով.

Դրամ ծախսելու օրէնքը ոտնակոխ եղաւ, գործիչ հրաւիրելը քէաբկվեց. ու այդ վայրկեանից Մեծ Օրինազանց շրջանական ժողովը և իր ընտրելիք ու ընտրած Կ. կոմիտէն իմ տեսակում ջնջվեցին իբր մարմիններ. Հէնց այդ վայրկեանից որոշեցի դրամ չը տալ այն մարդոց ձեռքը որոնք իրենք անձամբ ոչ մի սանտիմի զոհաբերութիւն չունենալով, լրբութիւնը ունէին հայ ժողովրդի տուած դրամները տալ արտասահմանի այսինչ կամ այն ինչ գործիչին, մանաւանդ որ կասսայում գտնվող դրամի ամենախոշոր մասը պատկանում էր երկրի *** Պատասխանատու մարմին, որը դեռ մեկնից իր ստանալիքը չէր պահանջել.

Ժողովը վերջանալուց յետոյ, Պիօնեան եկաւ իմ մօտից պաշտօնական գոյքեր և դրամը ստանալու. ես նրան յանձնեցի պաշտօնական իրերը և դրամի մի մասը միայն, որը չէր վերաբերում վերոյիշեալ պատասխանատու մարմնին ու մի ծաղրական նամակ ուղղված Կ. կոմիտէին, առանց ընկերներ տիպրոսը տալու և առանց ընկեր ստորագրելու. այդ նամակը հետեւեալ բովանդակութիւնը ունի.—դրամը առժամանակ ինձ մօտ եմ պահում. ինձ պէտք է... ես Դաշնակցութեան թէ անձամբ և թէ թերթով ձրի շատ եմ ծառայել... Խոստանալով միեւնոյն ժամանակ որ «Շարժումի միջոցով կը յայտարարեմ իմ այդ գրածները.

Կ. Կոմիտէն ստանում է իմ այդ նամակը և պաշտօնական ոպառնական գրութիւնով անմիջապէս պահանջում. Գործը այլեւս պաշտօնական չերպարանք ստացած է՝ որը և իմ փափագն էր ու դիտմամբ ստեղծած. ես պատասխանում եմ հետեւեալ բովանդակութեամբ նամակով.

—Այդ դրամները ես ձեզ չեմ յանձնի, որովհետեւ Դաշնակցութեան հիմնական օրէնքը ոտքի տակ տուող շրջանական ժողովը և նրա ընտրած մարմինը ինձ համար հեղինակութիւն չեն կարող լինել. մանաւանդ որ այդ դրամները պէտք է ձօնվեն այս ինչ կամ այնինչ գործիչին. այդ դրամները պատկանում են երկրի *** Պատասխանատու մարմին ու ես միայն նրան կը յանձնեմ կամ Դաշնակցութեան ընդհանուր ժողովին...

Նոյն նամակով և յայտարարում եմ, որ այլ եւս ինձ շրջանից դուրս եմ համարում. Ու փոթորիկը բարձրանում է. Կ. կոմիտէի անդամները այլ եւս որոշում են ինձ Դաշնակցութիւնից արտաքսել. որոշումը տալիս են և ուղարկում «Դիլօշակի» մէջ հրատարակելու. սակայն Արեւմտեան Բիւրոն յայտարարում է որ մենք չենք կարող Վարդօն Դաշնակցութիւնից վռնտելու որոշումը յայտարարել. դրա համար նոր շրջանական ժողով պէտք է գումարէք. Վարդօին էլ պէտք է կանչէք, իր բացատրութիւնները ստանալու համար, ապա որոշում տրվի. այդ որոշումը Դաշնակցութեան Խորհրդի քննութեան ենթարկվի և եթէ իրաւացի գտնվի, միայն ոյն ժամանակ հրատարակվի.

Բիւրոյի այդ պաշտօնական որոշումից յետոյ Կ. կոմիտէի անդամները թրջած հաւ են դառնում, ու այլ եւս սկսում պրոպականդա, գաղտնի նամակագրութիւններ, իրենց խելքով ապագայ շրջանական ժողովում ինձ սեւացնելու համար, որպէս զի Դաշնակցութիւնից ինձ վռնտեն.

Ահա օրինազանց և սարսափելի, լիօրէն օրինազանց մի շրջանական ժողովի ստեղծած, յեղափոխութեան դրամները զուր տեղ վատնելու ստոր շարժառիթներով տոգորված, յեղափոխութեան մէջ սանթիմ չարժող մի մարմնի դրամ յանձնելը իմ կողմից կատարեալ ոճրագործութիւն համարելով, մանաւանդ որ այդ դրամը նշանակված էր երկրի համար, յարմար ժամանակ եմ համարում շարունակել այլ եւս ազատ անխնայ պայքարը այն սիստէմի դէմ որ հետզհետէ զարգանալով անբարոյականացնում է մեր երիտասարդութիւնը, չնչին, յեղափոխութեան համար բացարձակապէս անպէտ տիպերի ձեռքը նետում արտասահմանեան գործունէութիւնը արտասահմանեան եկամուտի ամենախոշոր մասը վատնել տալով զանազան գործիչների ապրուստի համար. Եւ ես կատարեալապէս իրաւունք ունէի. որովհետեւ նախկուում էի բոլորովին էական օրէնք խորտակող մի ժողովի որոշումի դէմ և երկրորդ երկրին հասնելիք դրամը փրկում ձրիակերների որկորներից.

ՎԱՐԴՕ

Կ. ԷԶԵԱՆ

Ռուսահայ պահպանողական տարրի նշանաւոր ներկայացուցիչներից մէկն էլ մեռել է Պետերբուրգում։ Եզեանը չը նայելով որ միշտ Ռուսաստանում է ապրել, բայց երբէք չէ զլացել ծառայել իր հասարակութեան իր ըմբռնումների համեմատ։ Նա ունի և գրաւոր գիտնական աշխատութիւններ որոնք նուիրուած են հայի մանաւանդ մօտիկ անցեալին եւ որոնցից նշանաւորն է Օրբի և նրա ճիգերի պատմութիւնը Ռուսաստանի միջոցով վերականգնել Հայաստանը։

Եզեանը մեծ ազդեցութիւն ունէր ռուսահայ հարուստների վրա և դրեթէ նրա գրգմամբ է որ Ցովհաննեանները աղջկանց վարժարան հիմնեցին Թիֆլիզում, Սանասարեանը Կարնում, Գօգօյեանը Նոր Նախիջեւանում։

Հետաքրքիր է այդ պահպանողական բայց հայասէր հայի կարծիքը հայ յեղափոխութեան եւ արտասահմանի հայ մամուլի մասին, որ վերջերում Պարիզ գտնուած միջոցին յայտնել է պ. Զէրազին։

Եզով յայտարարել է որ յեղափոխականները մեր ցեղին աւելի վնասակար եղան քան քիւրտերը: Եւ պէտք չէ քաջալերել արտասահմանի հայ մամուլը, որպէսզի մեր հրապարակախօսները երթան եւ երկրում աշխատեն։

Պ. Զէրազ յայտարարում է որ ինք համաձայն չէ այդ կարծիքներին։

Այսպէս թէ այնպէս, ռուսահայերը Եզեանի մահով կորցնում են մի ազդեցիկ ու որոշ չափով յարգուած Պետերբուրգի բարձր շրջանում հայ, որը որոշ չափով օգտակար էր հանդիսանում մեր ցեղին։

Եզով իր դժրախտ եւ ճնշուած ցեղին օգնում էր իր հասկացողութեան եւ ըմբռնումների համաձայն եւ այդ ուրանալ պէտք չէ։ Բաւական է որ նա ոչ միայն չէր օտարացել, այլ եւ անտարբեր չէր դէպի իր ժողովրդի պահանջները եւ ցաւերը։

ՆՈՒՊԱՐԵԱՆ ԴՊՐՈՑԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Մօտերս Պօղոս փաշա Նուպար, իր վաղամեռիկ զաւակի յիշատակին կարեւոր դպրոց մը հիմներ է Գահիրէի մէջ, որու մասին հետեւեալ նամակը հրատարակած է պ. Զէրազի «Լ'Արմէնի»ն իր վերջին թիւով,

Պարոն Տնօրէն,

«Կը կարծեմ թէ ձեզի հաճելի պիտի ըլլայ Պօղոս Նուպար փաշայի Գահիրէի մէջ հիմնած դպրոցին կազմակերպութեան ձեւը համառօտակի ներկայացնելով։

Այդ դպրոցը կը կրէ «Հայ վաճառականական Նուպարեան դպրոց» անունը։

Անոր դուռները բաց են առանց դաւանանքի խտրութեան բոլոր հայերու առջին, միայն մէկ վերապահութեամբ մը որ ուղղափառ, այսինքն լուսաւորչական հայերը հայ աշակերտներուն ամբողջ թիւէն 2/3է վար չը պիտի ըլլան։

Թէև այս հիմնարկութիւնը ազգային է, բայց օտարականներ ալ կընդունուին, որոնք միայն աշակերտներուն ամբողջ թիւին մէկ քառորդը պիտի կազմեն։ Թօշակը և գիշերօթիկութիւնը վերապահուած է միայն հայերուն։

Հայ. արաբ. անգլիական և ֆրանսական լեզուներուն ուսումը պարտաւորեցուցիչ է։

Օտարականներու հայերէնի ուսումը կամաւոր է։

Հայերու ընդունելութեան համար հայերէն լեզուն գիտնալը անհրաժեշտ է։

Դպրոցը պիտի կառավարուի վարչական խորհրդով մը որուն մշտական անդամները պիտի կազմեն հիմնողը և իր ժառանգները որոնց պիտի միանան ամենաքիչը չորս օգնականներ ժամանակին ընտրուած հայ ազնուական շրջանակէն։

Նորհիւ նորին պայծառափայլութիւն Պօղոս Նուպար փաշայի ազատամտութեան հայ ազգը մեզմ կլիմայի և ազատ կառավարութեան իշխանութեան տակ պիտի ունենայ մտաւոր կեդրոն մը ուր բոլոր երկիրներու հայ երիտասարդութեան պիտի տայ բոլոր ապահովութիւնները լուրջ ուսումի, ազգային դաստիարակութեան և կրթական ընտրեալ մարմին մը։ Իցիւ թէ հայ երիտասարդութիւնը օգտուի այս օգտակար հաստատութենէն ինքզինքը կազմակերպելու և պատրաստելու վաճառականական, դրամական և վարչական ասպարէզներու համար։

Հաճեցէք ընդունիլ, սիրելի տնօրէն իմ խորին զգացմանս հաւաստիքը։

Բարիզ, 15 յուլիս 1005

Ա. Խ.— Շնորհաւորելի է Պօղոս փաշայի այս գործը. մեր վաճառականական գիտութիւններու ծարաւի երիտասարդները կարող են հայկական կրթութեամբ իրենց նպատակներուն հասնիլ։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ԱՊԱԳԱՅ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

—○—

(Լր. Բ. Խօրօբէյն Ս. Լերի Պօլիօ.)

Վերջին թիւ „Բուբիէ Խօրօբէյնի մէջ կարդացի որ ռուս պաշտօնականները յոյս ունին թէ ֆրանսական կառավարութիւնը չը պիտի համաձայնի որ ռուս կառավարութիւնը փոխառութիւն մը կնքէ Ֆրանսայի մէջ. եթէ Ռուսիա չը երաշխաւորէ այնպիսի բարենորոգումներով, որոնց շնորհիւ կարելի պիտի ըլլայ ազգութին հսկել կայսրութեան ելեւմուտքի վրայ։

Զեր Բեթերպուրկի Բղթակիցը, որ ձեզ կը ներկայացնէ ազատական ռուսներու բաղձանքը կատարելապէս լաւատեղեակ է։ Ես ինքս անձամբ, մօտերս Ռուսիոյ մէջ ըրած ճամբորդութեանս ատեն, յաճախ լսած եմ ռուսներու ինծի ըսածը այլեւս մեզի դրամ փոխ մի տուէք. գոնէ հաշտութենէն և Սահմանադրութենէն առաջ։

Աս է, ես պարտաւոր եմ ըսել ճշմարտութիւնը, զգացումը բոլոր կարեւոր քաղաքներու հոչակաւոր եւ զարգացած մարդոց, ինչպէս Կիէվի, Մոսկվայի, Օդեսսայի եւ Բեթերսպուրկի մէջ։

Սար հետ միասին ֆրանսացիներուն շատն ալ կը համաձայնի ռուսականին։ Նորէն կայսերական կառավարութեան միլիոններ տալը, առանց անոր ժողովրդին իրաւացի պահանջներուն գոհացում տալու ոչ միայն գէշ ծառայութիւն ընել է մեր դաշնակիցներուն, այլ եւ ֆրանսացիներու խնայածը վտանգի ենթարկել։

Ներկայ բոպէին Ռուսիոյ տրուած միլիարներուն միլիոններ աւելցնելու համար անհրաժեշտ է երկրին համաձայնութիւնը մեզ ներկայացուած իր ընտրուածներու միջոցով։ Ցարի նախարարներուն ստորագրութիւնը մեզի համար գոհացուցիչ երաշխաւորութիւն չէ։

Մեր պարտականութիւնն է այն հազւագիւտ ֆրանսացիներուն, որոնք դեռ հաւատք ունին ինքնակալ ռէժիմի վրայ, անդիտակից չը թողուլ որ Ռուսիա յեղափոխութեան դէմ յանդիման կը գտնուի։

Թէ ապագան Ռուսիոյ համար ինչ կը պահէ ոչ ոքի յայտնի չէ։ Նախ քան նոյն դրամ տալը, որուն ան ինչ որ յիմարութիւն նոյն իսկ բռունցքով սպառնալով յանկարծ նկատեցի մի սուեր պարտէզում որ ուղղվում էր դէպի տերրասը և մէկը տերրասից տուն մտաւ և դրանից վերջը Վիկտորիայի ննջարանում ճրագ վառվեց, որը անմիջապէս կրկին մարեցին։ Սակայն ոչ այնքան ուշ որ ես չը նկատէի վարագոյրների վրա անդրադարձած ստուերները։ Այդ ստուերներից մէկը Վիկտորիայինն էր. կանացի և միւսը տղամարդի. . . . Ու այդ տեսայ ես ինչպէս տեսաւ և Աֆանասիչը.... ես ատրճանակը վերցնելով վազեցի դէպի տերրասան, հետս քարշ տալով և Աֆանասիչին, որը շատ աղաչեց պաղատեց որպէսզի իրան չը խառնեմ նախանձոտի արկածների մէջ։

Ես Աֆանասիչին պահապան դրի տերրասի վրա, և ամենից առաջ վազեցի ձեզ մօտ որ տեսնեմ թէ ձեր սենեակում էք գտնվում, որովհետեւ ստուերի ձեւը ձեր մարմնի ձեւին նըման երեւաց ինձ, ու կասկածները ձեր մասին բազմապատկվեցին վայրի մեղուների նման. . . .

Այդ ամբողջ արկածից ինչ դուրս եկաւ։ Ամեն բան աղոտ, անօգնուտ և յիմար երեւոյթ ստացաւ,

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՕՐԻԱ ՊԱՎԼՕՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագէտի յիշողութիւններից. Ամրան արկածներ բաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

49

Թ.

(Շար. նախորդ թիւին)

Եթէ յիշում էք մենք այդ օրը տուն վերադարձանք մութը բոլորովին ընկած միջոցին. ձեզ տեսանք բակում. յիշում եմ որ ես ձեզ հետ շատ կոպիտ կերպով վարվեցի եւ հիմա այդ մասին ներողութիւն եմ խնդրում։ Բոլոր սատանաները իմ մէջ փոթորիկ էին բարձրացրել. ենթադրված հակառակորդը իմ ուղեղի մէջ մեխվել էր։ Ով էր, մտածում էի, Դուք, ուսանողը... այդ բոլորն էլ անընական եւ հանգամանքներին անյարմար էր գալիս։ Վերջապէս ինչի այդ երջանիկ յաղթական պարոնը ան պատճառ Պրովոսլայում պէտք է ապրելիս լինէր, ինչի օտար չը լինել. եւ ինչի անպատճառ մտածել որ ազնուական դասակարգին է պատկանում, մի կին որ կարողացել է ընկնել եւ անձնատուր լինել Աֆանասիչի պէս մէկին, ինչի չէ կարող ո եւ է գիւղացի սիրուն երիտասարդի անձնատուր լինել... դուք ինձ կասկածելի էիք երեւում, որովհետեւ Վիկտօրիան ձեզ հետ շատ լաւ էր վերաբերվում բոլորիս ներկայութեանը, յարգելով ու ամենիցս գերադասելով.. Ահա թէ ինչի այն գիշերը ես բախտաւորացրի ձեզ իմ արբածի ատրճանակով, եւ ճարտասանութեան բոլոր ծաղիկներով զինված այցելութիւնովը։ Երբ ես ձեզնից վերադարձայ Աֆանասիչին տերրասի վրա չը գտայ. ան պիտանը վախեցել էր եւ փախել թագնվել իր որճում, ես նրան կրկին իր որճից դուրս բերի որպէս զի գամ ձեզ մօտ արդարանամ. բայց ես պարտաւոր եմ առաջուց պատմել թէ ինչ տեղի ունեցաւ տերրասի վրա եւ թէ ինչի մենք այնտեղ էինք գտնըվում։

Դուք գիտէք որ իմ սենեակս անկիւնի սենեակն էր եւ դրա համար էլ այնտեղից Վիկտօրիայի ննջարանի պատուհանները լաւ երեւում են։ Ահա ես շրջագայում եմ իմ սենեակում շատ փազանց յուզված, հայհոյում եմ, անիծում եմ, եւ վերջ ի վերջոյ չեմ կարողանում որոշում տալ, թէ ինչպէս դուրս գամ իմ յիմար կացութիւնից։

Աֆանասիչը նստել ինձ լսում է եւ միայն երբեմն երբեմն ծվծվում է.

—Կամաց, Բուբուն, կամաց. չէ որ դուք խոստացաք.. Արինան կարող է միջանցքով անցնել եւ ականջ դնել։ Ես կը կորչեմ. դուք ինձ կը ոչնչացնէք. .

Լուսինը արդէն շատ բարձրում էր լողում ու պարտէզը կարծես կաթով ողողում. իսկ ես խենթացածի պէս պատռվում, կոնեակ էի խմում և յուզվում...

Պարզ էր որ Աֆանասիչը որոշել էր մի վայրկեան ինձ աչքից չը փախցնել, որպէսզի ես աւելի մեծ յիմարութիւններ չանէի։ Եւ ահա այն միջոցին երբ ես իմ սենեակի պատուհանների առջեւ կանգնած Վիկտօրիայի պատուհանների ուղղութեամբ արտասանում էի ողբերգական

պէտքը պիտի ունենայ, տեղները ի բաւունք ունին ինքզինքնին հարցնելու թէ արդեօք նոր փոխառութիւնը օր մը ենթարկուելու չէ ժողովրդին ուրացմանը։ Ուստի խոհեմութեան համար իսկ պէտք է որ նոր փոխառութիւնը տեղի ունենայ տուս ազգային ժողովի մը երաշխաւորութիւնովը։ Այս պահանջ մըն է որ ցարին կառավարութիւնը չափազանց չը պիտի գտնայ, մանաւանդ որ վերջերս խօսք տուած է ամենակարճ ժամանակամիջոցի մը մէջ ազգին ներկայացուցիչներու ժողով գումարել։

Ռուսիոյ ազգային ժողով ունենալու օրէն սկսեալ, ոչ մէկ պայմանագրութիւն կնքուիլ չի կրնար, առանց ներկայացուցիչներու վաւերացման։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԷՆ

ՆԷՇՈՒԷ, 15 յուլիս 1905

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ու եթէ կայ այսօր յուսատու ու մխիթարական կէտ մը, որ ունի Հայաստանցի հայը, Ամերիկայ գաղթելով հանդերձ, դեռ չի մոռնար իր ազգը, իր հայրենիքը, ու մասնաւորապէս իր ծննդավայրը, ընդհակառակը անոնցմէ շատեր փափաք ունին օր մը կրկին վերադառնալ իրենց պապենական օճախը։

Ճիշդ է սակայն թէ կան կարգ մը հայեր ալ որոնք Ամերիկա գաղթելով, մոռցած են իրենց ազգը, հայրենիքը, և ծննդավայրը, ու նոյնիսկ իրենց հայ ըլլալու պարագան, և վարժուելով Ամերիկայի ազատ մթնոլորտին, գերադաս կը համարեն, գործարաններու նեխած ու ապականեալ օդը ծծելով հալիլ ու մաշիլ, ու իրենց ամբիծ մարմինը յանձնել Ամերիկայի ցուրտ գերեզմաններուն, քան Մայր Հայրենիքի մաքուր, ջինջ, ու կենսատու օդը ծծելով ապրել ու մեռնիլ....

Բայց Ամերիկայի ամբողջ հայ գաղթականութիւնը չենք կրնար անոնց նման այլասերուած ըմբռնել. եւ տակաւին ամենէն պերճախօս ու համոզիչ փաստը մենք կը տեսնենք այն կէտին մէջ, որ երիտասարդները ինքնաբերաբար կուգան ու կը խմբուին յեղափոխական փրկարար դրօշին շուրջը, ու անոր մէջ միայն կը գտնեն իրենց մխիթարութիւնը ու երջանկութիւնը։

Անոնք բոլորն ալ լաւ հասկցած ու ըմբռնած են, որ Ամերիկան որքան ալ փայլուն ըլլայ, մեզի համար չէ, անոր վարդերը մեզի համար ՓՈՒՇ են, և Նար-Պէյ շատ ճիշդ ըսած է իր բանաստեղծութեան մէջ թէ,

Օտարին հաց.մեզի անուշ չէ՛ բնաւ
Օտարին ջուր.ո՛չ, չի մարեր մեր ծարաւ.

Այո՛, օտարութեան այս խուլ անկիւններուն մէջ, „հացն աղի, և ջուրն անհամ է“ հայերուս համար, ու ատոր համար է որ, ամեն հայ ազգի սիրտը կազմող՝ հայ երիտասարդը, չի կրնար ուրախանալ ու հրապուրուիլ, ժամանակաւոր „փառքով“ մը։ Անոր սիրտը կապուած է իր հայրենիքին ցաւերուն հետ......

Հո՛ն, տառապանքի՛ աշխարհին մէջ, Մասիսի և Արարատի, Նեմրութայ ու Ծաֆա քարին մօտիկը, Սերոբի, Գուրգէնի, և Հրայրի ու Վահանի քովիկը, պէ՛տք է թաղուին հայ երիտասարդներու ամբիծ ոսկորները. և ո՛չ թէ այս„Եանքիներու երկիրը“

Արդեօ՛ք, բախտը մեզի ալ պիտի ժպտի՞։

ԵՐՈՒԱՆԴ-ՆԱՐՕՏ

ՏՕԳՕՆ ԵՒ ՌՈՒՍՆԵՐԸ

„Ռուսկիա Վեդոմոստի“ խնդրի նիւթ չինած է ճարոնական նաւատորմիղին Պալթիկեան ծովը գալու պատահականութիւնը եւ հետեւեալն է ասում. անվիճելի որ Տօգօն չը պէտք է կարողանայ ամբակոծել Պալթիկեան մեծ նաւահանգիստները, որովհետեւ Լիբաուի եւ Կրօնշտադի նման ամուր նաւահանգիստները ռմբակոծելը ոչ միայն դժուար այլ եւ վտանգաւոր է։ Այն վնասները որ ճարոնական նաւատորմիղը կստանայ այդ նաւահանգիստների դիմադրութիւնից, Տօգօն չտկելու տեղ չպիտի ունենայ։ Իսկ մանր նաւահանգիստները ամբակոծելու մէջ ճարոնիան բոլորովին շահ չունի, ուրեմն եւ այդ չկայ ծրագրի մէջ։

Տօգօն չը պէտք է կարողանայ եւ զօրք իջեցնել Պալթիկեան նաւահանգիստները, որովհետեւ դրա համար պէտք է մի ամբողջ զօրաբաժին եւ հարիւրի չափ մարտանաւեր որոնց պաշտպանումը շատ դժուար է, իսկ աւելի դժուար կը լինէր այդ զօրքին պաշար հասցնելը. Եթէ յաջողի մի ամբողջ զօրաբանակ բերել, կրկին Տօգօն ոչինչ չը պէտք է կարողանայ։ Որովհետեւ Ռուսիան կարող է տասը զօրաբանակ հանել դիմացը։ Իսկ փոքր քանակութեամբ զօրք իջեցնելը ոչ մի նշանակութիւն չունի, որովհետեւ իսկոյն պէտք է ջնջվի։ Մինչդեռ լաւ ստուգված տեղեկութիւնների համաձայն Տօգօն պատրաստվում է գալ Բալթիկեան ծովը։ Այդ ժամանակ հաւանական է որ նա գրաւէ ծովի մէջտեղում գտնվող Ալանդ կղզին, եւ իր գործունէութեան հիմնակէտը դարձնելով իր նաւերը բոլոր ուղղութեամբ ցրվելով պաշարէ մեր նաւահանգիստները։ Մենք ոչ մի ուժ ունինք ճարոնացիներին դիմադրելու. Նրանք կը գրաւեն ծովի տէրը եւ եթէ այդ շարունակվի 3-4 ամիս Ռուսիան բոլորովին կը սնանկայ. որովհետեւ երկրի արտահանած ապրանքի կէսը արտահանվում է Բալթիկ ծովի միջոցով։

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՍԱՍՆՈՅ ԵՒ ՏԱՐՆՈՅ ՀԱՅ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐՈՒՆ

Քաղաք Սքարա-Զակօրա

Տէր Խմբագիր!

Հաճեցէք ներկայ հանգանակութեանս ցանկը հրատարակել Ձեր ազգօգուտ թերթին մօտակայ թիւերէն միոյն մէջ։

Մեծ. Տիարք Սարգիս Փափազեան, 10 ֆրանք Սիմոն Մէճէլեան, 10 ֆր. Յովհաննէս Յակոբեան, 2 ֆր. Հաճի Ղազար Խաչատուր, 2 ֆր. Ազարիկ Փափազեան, 3 ֆր. Միքայէլ Մկրտիչեան, 1 ֆր. Յակոբ Ալեանաք, 1 ֆր. Յովհաննէս, 1 ֆր. Յակոբ Կազմարար, 2 ֆր. Սարգիս Ռուբէնեան, 5 ֆր. Կարապետ Ֆէլէմէնկճեան, 3 ֆր. Հաւաքուած ընտանեկան երեկոյթէ մը. 30 ֆր. Իսլիվէնի գանձանակէն Սասնոյ նպաստ 55 ֆր. Մեծ. Տիարք Պօղոս Յարութիւնեան, 2 ֆր. Մարգար Մխիթարեան, 1 ֆր. Մանուկ Յարութիւնեան 2 ֆր. Յովհաննէս Յակոբեան, 1 ֆր. Համբարձում Յովհաննէսեան, 4 ֆր. Կարապետ Զավուշ, 3 ֆր. Գրիգոր Կարապետ, 4 ֆր. Գէորգ Մանուկեան, 3 ֆր. Աստուածատուր Գրիգորեան, 2 ֆր. Մկրտիչ Աբրահամեան, 2 ֆր. Մելիք Գրիգորեան, 3 ֆր. Թորոս Յակոբեան, 2 ֆր. Սերոբ Յակոբեան, 2 ֆր. Համբարձում Մուրատ, 2 ֆր. Կարապետ Յովսէփեան, 2 ֆր. Յարութիւն Մուրատեան, 1 ֆր, Յովհաննէս Ղազարեան, 1 ֆր. Միսակ Խաչատուրեան, 1 ֆր. Պաղտասար Հաջոյեան, 2 ֆր. 4ն գանձանակէն Միացած, 15 ֆր. Ընդհանուր գումար ֆրանք ոսկի 180.

Բայց ես շարունակում եմ պնդել որ Վիկտորիայի մօտ, մեր լըտեսած միջոցին, անպատճառ օտար մարդ կար։

Արինայի դուրս գալը Վիկտորիայի մօտից ինձ համար բոլորովին անսպասելի էր, այնքան զարմացայ նրա երեւան գալովը. որ ակամա եռեւեցը վազեցի երեսին նայեմ համոզվելու համար թէ իրօք նա՞ էր... Նա վազեց արագարար, ես լսեցի թէ դուք ինչպէս ձայնեցիք նրան և նա պատասխանեց։

Ու այդ միջոցին էր որ ես ուշքի եկայ թէ, իմ Արինայի ետեւից վազած միջոցին, տերրասան հսկողութիւնից ազատ մնալով Վիկտորիայի մօտ գտնվողը աղմուկից վախցած յարմարութիւն է ունեցել պարտէզ ծլկելու։ Բայց դրանից առաջ ես իմ ականջներով լսեցի ծիծաղի եւ համբոյրի ձայներ, ինչպէս եւ ազամարդի ձայն։

Երդվում եմ ձեզ որ այդ նախանձոտի երեւակայութեան խաբուսիկ երեւոյթ չէ. Մի րոպէ էլ եւ. ես պէտք է տեղահան անէի Վիկտորիայի դուռը որպէս զի կեդծիքը մէջ տեղ հանեմ լուծեմ թէ իմ եւ թէ ինձ նմաններին վրէժը, որոնք այդ տեղ չարչարվելէն յիմար եւ գաղտփարական երազներով... Ու ինչպէս ասացի այդ միջոցին էր որ մէջ տեղ ընկաւ Արինան ամէն ինչ իրար խառնեց եւ ոչնչացրեց։ Վերջը Վիկտորիայի ննջարանում գերեզմանային լռութիւն տիրեց.՝. էլ սպասելու բան չը կար... Առաւօտը լուսաբացին ես պարտէզ գը նացի գիշերային հիւրի հետքերը որոնելու, բայց տերրասայի առջեւի գետինը այնքան կոխկռտված է որ ոչ մի հետք գտնել չը կարողացայ. ես կուպերի Պատֆայնտէրը չեմ։

Իմ կատաղութիւնս Վիկտորիայի հանդէպ շատ մեծ էր, իսկ վստահութիւնս նրա անբարոյականութեան մէջ կատարեալ։ Բայց կարելի է որ ինքս ինձ տիրապետէի եւ ոչ մի վիրաւորական քայլ չանէի Վիկտորիայի հանդէպ։ եթէ նրա գրգռող տօնը չը լինէր որով նա եկաւ թէյի ու ըսկսեց ինձ նախատել ձեր եւ Արինայի ներկայութեանը արդար մարդի նըման։ Ու ես բերանս բացի ցոյց տալու համար որ իրեն լաւ ճանաչում եմ այլեւս, ու ինքը այն չէ ինչ որ ներկայանում է։

Դուք նստած լսում եւ ոչ քաջալերական կերպով նայում էիք ինձ. Արինան ժպտում էր չարութեան թոյնով լի, կարծես ես երեխայ լինեմ եւ հիմա կը պատժէք քոթկել։ Ու դրանից աւելի կատաղեցի։ Այն խոստումը որ հանդիսաւոր կերպով տուել էի Աֆանասիչին լռելու համար գլխիցս դուրս թռաւ. ես սանձս կրծելով թռայ առաջ ու դուրս տուի ամենը ինչ որ հաւաքված էր գլխումս եւ սրտումս... Խնդրեմ ասացէք. իրօք, իրաւունք չունի՞մ ես. միթէ Վիկտորիան աղտոտ, լիրբ ու չար չէ՞։

Բայց ամենից վատը այն է որ ես այդ ամենը գիտենալուց յետոյ Վիկտորիան ամեն բանով, ինչ որ գիտեմ, տեսնելուց յետոյ սրտիս խորքում զգում եմ որ նրան շատ եմ սիրում, աւելի քան երբէք։

Բայց սրանք կրկին անձնական զգացումներ են որոնց համար ես ամաչում եմ եւ զօրով գրել եմ ձեզ, որովհետեւ ինձ խոստացել եմ այս նամակիս մէջ լինել արդարադատ: Ոչ մի կասկած կայ որ ես էլ Վիկտորիային երբէք չեմ տեսնի. գոնէ իմ կողմից ամեն ճիգ կը թափեմ նըրան չը հանդիպելու... դրա համար փառք աստուծու կամքի ուժ կունենամ։ Ես չեմ կարող ներել վիրաւորանքները, իսկ այս պարագայում վիրաւորված է իմ առնական ամբողջ արժանիքը։ Իմ կարծիքով անբարոյական կնոջը պաշտել չէ կարող այր մարդը առանց ինքզինքը յարգել դադարելուց. իսկ առանց դրան ապրիլ չէ կարելի։ Եթէ մարդ ինքզինքը չէ յարգում եւ չէ սիրում էլ ինչ պէտք ապրելու երկրի վրա, ի՞նչ կարող է նա կատարել։ Ես Պրօվօսլայի վերջնական հրաժեշտը տուի։ Ջեմ կարծում որ շուտ եւ դիւրին կերպով կը մոռանամ, որովհետեւ շատ խորն եմ վիրաւորված, այնու ամենայնիւ կը մոռանամ կազատվեմ անցեալ մղձաւանջից. իմ մասին անհանգիստ մի լինէք. խոստանում եմ ձեզ. խօսք եմ տալիս։ Իսկ եթէ չկարողանամ մոռանալ կը նշանակէ սանթիմ. չարժեմ. ու աւելի կը գերադասեմ մեռնել քան կրկին ենթարկվել Վիկտորիային...

(Շարունակելի)

Մանօթութիւն — Նախորդ հանգանակութեանս արդիւնքը որ ղրկուած է Ֆրանսական յանձնախմբին ֆրանք ոսկի 480. Ներկայ հանգանակութեանս արդիւնքը որ ղրկուած է Ազգ. Պատրիարքարանին ֆրանք ոսկի 180 համագումար 660

Ի գիտութիւն պատուարժան նուիրատուաց յայտարարելով զայս, կը յայտնենք մեր շնորհակալութիւնները եւ կը մաղթենք կար եւ կարողութիւն. Աղօթարար Ազգիս

Վաղինակ Քահանայ

13/26 Յուլիս 1905

ԻՍԼԻՄԻԱ

ՍՈՒԼԹԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԻ ԱՌԹԻՒ

—○○—

Քնութիւնները եւ ձերբակալութիւնները դեռ կը շարունակուին. հեազհետէ խնդիրը աւելի կը կնճռոտի եւ եւրոպական անիշխանականներու գործի կերպարանք կ'ստանայ. խուզարկութիւններ կը կատարուին եւ եւրոպական հպատակներու քով։ Ոստիկանութիւնը եւ կառավարութիւնը գլուխնին կորսնցուցած են։ Եւրոպա ապրող ժէօն Թիւրք մը եւրոպական թերթերէն միոյն միջոցով կը յայտարարէ որ սպանութեան փորձը իրենց գործն է.

Ձերբակալութիւնները կը շարունակուին հայերու եւ պուլկարներու մէջ. բայց խնդիրը պարզելու համար ոչ մէկ արդիւնք կը տեսնուի. յայտնի կերեւի որ այդ երկու տանջուած ժողովուրդները այս գործին մէջ մատ չունին։

Մահմետական ամբոխը շատ գբգռուած է եւրոպացիներուն դէմ, նոյն իսկ տրամադրութիւններ ունի անխիր քրիստոնեաներու ջարդի դիմել։

Եւրոպական գեսպանները խիստ կերպով դիմած են Բ. Դրան որ իրենց հպատակները հանգիստ թողուին։

Ըստ երեւոյթին ոչ մէկ յոյս կայ իսկական մեղաւորները գտնելուն. հոչակաւոր կառքը բերել տուող եւ ընդունող քմիսիոնները է որ կը փնտռուի. և այդ պատճառով քանի մը աւստրիահպատակ քմիսիոններու քով խուզարկութիւն կատարուած է։ Ատուած բարին կատարէ. առ այժմ հայերը կրնան ապահով ըլլալ որ կառավարութիւնը համոզուած չէ եւ կարծես չի ալ ուզեր համոզուիլ որ այդ գործը ընողները հայերն են։ Եթէ միշտ այսպէս երթայ Սուլթանի անձնական վրէժէն զոնէ ազատ պիտի մնանք, որը շատ արդարացի պիտի ըլլայ։

ՖՐԱՆՍԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ ԾԱՑՐԱԳՈՑՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—○○—

Պօլ Տէշանել, երեսփոխանական ժողովի արտաքին եւ գաղթային գործերու համար հիմնած յանձնաժողովի նախագահը, նախարարապետին է յանձնել յանձնաժողովի հետեւեալ առաջարկութիւնները.

1) Որ Չինաստանի եւ Հնդկաչինի միջեւ վաճառականական դաշինքի եւ ուղղակի յարաբերութիւնների խնդիրը բարձրացվի եւ որոշվի։

2) Ցանկալի է որ Անգլիայի հետ համաձայնելով չինվին չինական երկաթուղային գծեր։

3) Ցանկալի է որ ֆրանսական եւ անգլիական շահերը Չինաստանում եւ Մ. Արեւելքում Ընդհանուրի վերածվեն եւ այդպիսով այդ երկու պետութեանց հողային Ստատուքօն պահպանվի չինական ջրերում։

„Մօրն. Պոստ" թերթը վերը յիշածները հրատարակելով՝ նկատում է, երրորդ կէտը ամենաարժէքաւորն է Ֆրանսայի համար ներկայում երբ ռուսական ազդեցութիւնը չինական ջրերում ընկնում է։

Բայց Անգլիան նախ քան ուրիշ պետութիւնների հետ այդ մասին դաշնակցութիւնը կնքելը պէտք է հարցնէ իր դաշնակից Ճաբոնիային։

Ու աւելցնում է որ ամենապարզ լուծումը այն կը լինէր որ բոլոր բարձրացած այդ տեսակ խնդիրները յանձնվէին մի անկողմնակալ միջնորդ դատաւորի։

Այդպիսի դատաւոր կարող է լինել Միացեալ Նահանգների նախագահ Ռուզվէլտը, որովհետեւ թէ՛ Միացեալ Նահանգները առանձին մի շահ չունին այդ գործերում եւ թէ՛ Ռուզվէլտը ինքը բարեկամ է Ֆրանսայի եւ Անգլիայի։

Մենք մեր կողմից աւելցնում ենք. Սրանից պարզ երեւում է որ ֆրանսական կառավարութիւնը աչխատում է որչափ կարելի է շատ ՝ժամանել Անգլիային, մանաւանդ իր գաղ. Ծականութիւնները ապահովելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պուլկար էքզարխին տեղեկագիրը կծու ոճով բողոքագիր մը տուեր է կառավարութեան մատնանշելով ոստիկանութեան ապօրինի վարմունքը, որով վերջինս թոյլ տուեր է իրեն խուզարկել էքզարքարանը և պաշտօնեաներ ձերբակալել։

Երկրորդ թաքրիր մը նաւ պիտի ղրկուի, որով տեղակալը թուրք կառավարութեան վրայ պիտի ձգէ պատասխանատուութիւնը էքզարքարանի անձեռնմխելիութիւնը ոտնակոխ եղած ըլլալուն հետեւանքներուն։

Յուլիս 21 ի գիշերը կառավարութիւնը ետ դարձուցած է էքզարխարանի և պաշտօնեաներու բանալիները. և երբ վերջիններս մտեր են դիւանատուն ամեն ինչ խառնի խուռն վիճակի մէջ գտեր են։

— Յուլիս 19 ին Պոլսէն կը հեռագրեն թէ, աւստրիական դեսպանը Բարձրագոյն Դրան յանձնեց նօթա մը, պետութեանց կողմէն, որով կը պնդէ Մակեդոնիոյ միջազգային քօնթրոլ մացնելու վրայ։

— Շատ մը իտալացիներ ձերբակալուած են Պոլսոյ մէջ. շնորհիւ անստորագիր տեղեկագրի, որով կիմացուի թէ հրաչակաւոր կառքը ստացողները ոչ թէ մէկ այլ երեք իտալացիներ եղած են։ Ձերբակալութիւնները կը շարունակուին օտարներու մէջ. տէրօրը կը տիրապետէ իր ամեն գէշ կողմերով. ամենուն համար ալ կացութիւնը անտանելի կը դառնայ։ Դեսպանները լուրջ կերպով զբաղիլ սկսած են այս կացութեան վերջ մը դնելու համար։ Վերջերս հաստատուած է հեռաւորագրի մարդ մը որ Բապօ կը կոչուի եղեր, ուստրիական անցագիր ունէր անցեալ սեպտեմբերի վերջերը Պոլիս եկած է և Եէնի Զարշի փողոցին մէջ բնակարան մը վարձած է Մօրատովիչ անունով աւստրիացիի մը քովը։ Այդ մարդը կասկածելի կերպարանք, գործով մը չէր զբաղէր, խորհրդաւոր կեանք մը կը վարէր։ Ան անմիջապէս կը ծանօթանայ Պելճիգացիի մը հետ ու միչտ անոր հետ կը քալէ։ Քանի մը օր առաջ Պելճիգացին Բապօի կը բերէ հրաչակաւոր կառքը, որուն Ճաւցորդները գտնուած են փորձի վայրը։ Բապօն պայթումի օրը կանհետանայ։ Աւստրիացի Մօրատովիչը անկէ նամակ մը կ'ստանայ, որով կը խնդրուէր իրմէ պայուսակը իրեղէններով միասին առնել Պելճիգացի բարեկամի քովը։ Ուրիշ Պելճիգացի մը Ժորիս անունով՝ ձերբակալուած է։ Պելճիգայի դեսպանը անմիջապէս պահանջած է իրենց հպատակին ազատ արձակումը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆիլիպէի մէջ ոստիկանութիւնը թրքական կեղծ ոսկիներ շինողներու խումբ մը ձերբակալեր է. ատոնց մէջ և երկու հայ ոսկերիչներ։ Խուզարկութիւնները կը շարունակուին։

ՌՈՒՍԻԱ

Յուլիս 19 ին նախարարական խորհուրդը պիտի զբաղէր, Ցարին նախագահութեամբը, Պուլիկինի սահմանադրական ծրագրով։ Այդ ժողովին հրաւիրուած են բարձրագոյն պաշտօնեաներ և Գլիւչարով ու Բավլով բրոֆէսէօրները։ Թէ զէմսթվոներէն և թէ քաղաքային վարչութիւններէն ներկայացուցիչներ չըկան։ Սահմանադրական ժողովի հռչակումը կսպասուի յուլիս 30ին։

ՌՈՒՍՕ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Միացեալ Նահանգներէն կը հաղորդեն որ հաշտութեան բանակցութիւնները դժուարութիւններու կը հանդիպին։

Ճաբոնացիք կը շարունակեն յառաջանալ, ցամաքէն դէպի Վլատիվոստոք. ըստ երեւութին Լինեւիչ ևս դատապարտուած է Քուրօրախքինի բախտին արժանանալ։

ԱԶԴ

Ազգային երկսեռ վարժարանաց համար կարող և վկայեալ ուսուցիչներ և ուսուցչուհիներ կուզուին։

Փափաքողները կրնան գիմել անձամբ կամ գրաւոր վարժարանաց Հոգաբարձութեան։

Հոգաբարձութիւն Ազգ. երկսեռ վարժարանաց Վառնայի

Վառնա, 22 յուլիս 1905

(Կնիք)

ԱԶԴ

Ռումանիոյ Ֆոքշան քաղաքի Հայոց եկեղեցւոյն համար պէտք է ուսեալ բարեկիրթ եւ իր նուիրական կոչումին լաւ ճանաչող քահանայ մը։ Նոյնպէս մեւնոյն բարեմասնութիւնք օժտեալ երաժիշտ մը՝ քաղցրանուագ ձայնիւ։

Փափաքողներն գիմեն գրաւոր եւ որոշ տեղեկութեամբ ու միանգամայն ազգային պաշտօնական վկայութեամբ առ Էկլիզ Արմէնիէն ա Ֆոքշան Ռումանիա։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑ ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑԻ

Ի Վառնա

Գլխաւորապէս Ֆրանսերէն լեզուով

-:- o -:-

Պարտաւորիչ են նաեւ Հայերէնը եւ Պուլկարերէնը, իսկ Գերմաներէնը, Անգլիերէնը եւ պիանօն փափաքողներուն մասնաւոր պայմանով։ Դպրոցը կ'սկսի յառաջիկայ սեպտեմբերի մէկին։ Ամիսը 8 ֆրանք մէկ աշակերտէն։ Կան արդէն գիշերօթիկներ, եւ մի քանիք ալ կ'ընդունուին։ Այս մասին դիմել երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրը երեկոյեան ժամը 5–8. եւ կամ նամակով

Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆՑԻՆ։

ԿՎԱՃԱՌ

Վառնա, կեդրոն փողոցի մը մէջ մէկ ու կէս յարկով քարաշէն հաստատուն մը շինուած 95 քառակուսի մէթր տարածութեան վրայ. 245 ք. մէթր պարապ հողով։ Ունի 5 սենեակ, մէկ խոհանոց, լուացարան, հոր եւ ամեն ինչ որ անհրաժեշտ են ընտանիքի մը հանգստութեանը համար։

Փափագողք կրնան դիմել «Շարժուժի» խմբագրութեանը։

Печатница на П.Глушковъ и С-ие, Варна